սպասեն գերեհան Հայերու[1], որ գան և արծաթով գնելով ազատեն զիրենք այդ տառապանաց վիճակէն, և տանին իրենց ընտանեաց մօտ։

Բագուի Թոռը Մանգու-Դէմիր, իւր որդւոց մէջ կը բաժանէ Թերակղզիս. և Օրան-Դէմիրի ժառանգութիւն կ'ինկնայ Սուրխաթ քաղաքէն մինչև Թէոդոսիոյ ափունքը 1266ին։ Սուրխաթ կը լինի մայրաքաղաք Օրան-Դէմիրի. և սորա իշխանութեան միջոց կը փոխուի Նորա անունը ի Ղրիմ կամ Քըռըմ. և որովհետև ժամանակ անցնելէն վերջ, բոլոր Թերակղզւոյն անուն կը դառնայ Քըռըմ, որպէս զի մասը բոլորէն զանազանի, Հին մակդիրը կը դնեն քաղաքին վերայ, կոչելով Օրան-Դէմիրի մայրաքաղաքը Հին կամ Էսկի-Քըռըմ։ Ուշադրութեան արժանի է, որ Սուրխաթի անուանափոխութենէն իբր 300 տարի առաջ Թէոդոսիա ևս փոխել է անունը և սկսել է Կաւա-Կաֆա կոչուիլ։ Այս երեք անուանց վերայ, այդ է Սուրխաթ, Կաֆա, և Ղրիմ առանձին գլխով պիտի խօսիմք, բացատրելով նոցա ծագումը կամ ստուգաբանութիւնը։

1. Ինչպէս Օվանէս Պոկտանովիչ 1579 ին։